


ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

ԵՒ

ԿՏԱԿՔ



1925
Գ. Ռ. Պ.

Հայոց հայության
հրապարակ պատմագիր 1 MAR 2018
493

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
= ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

361
74-94

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

ԵՒ
ԿՏԱԿՔ



1925
ՓԱ. ՐԻԶ

12 JUL 2013

43.113

ԵՐԱԾՈՒՅՈՒՆ

Հ. Բ. Ղ. Միութիւնը իր հաստատութեան թուականէն ի վեր (19օ6) բաւական թուով նուիրատուութիւններ ու կտակներ ընդունած է, որոնցմէ շատերը իրենց ամենամեծ կարեւորութեամբ հնարաւոր դարցուցած են Միութեանս օգտակար գործ կատարել, և իր գործունէութիւնը ընդարձակել, ինչպէս ան ըրաւ վերջերս Հայաստանի մէջ, շնորհիւ Յակոբեան փաշալի և Մէօթէմէտեանի կտակներուն:

Միութիւնս մինչեւ հիմալքաւար ճիգ մը չ'էր ըրած աւս օրինակ կտակներ յինքն ձգելու համար, բայց աւսօր որ ան վերածուած է զուիցերիական ընկերակցութեան մը, և ունի իրաւական գորութիւն և օրինական դիրք մը, որ կը թուլատրէ իրեն ստանալ և վարել ամէն նուիրատուութիւններ և կտակներ, հիմա՝ Միութիւնը աւելի դիւրութիւն և երաշխաւորութիւն կ'ընծալի նուիրատուներուն:

Արդ նկատելով, մէկ կողմէ, վերջին իրադարձութեանց առթիւ ստեղծուած նոր կացութիւնը, — մասնաւորաբար Պօլսու Հայ Պատրիարքարանին համար, — և միւս կողմէ՝ նկատելով բազմաթիւ թելադրութիւնները որ կ'ըւլսն Միութեան իր Մասնաժողովներուն կամ անհատներու կողմէ, որպէսզի ան աւելի աշխուժիւ զբաղի նուիրատուութեանց և կտակի խնդիրներով՝ կեղր. Ժողովը որոշեց աւս ան-



66382-68

զամ լատուկ միջոցներ կիրարկել անոնց իրագործումը դիւրացնելու համար, ինկատի առնելով մանաւանդ մեր հալրենակիցներու տատամսումը, որոնք ցարդ չէին պիտեր որո՞ւ դիմել կամ ի՞նչ ընել պէտք եղած պաշտօնական ձեւակերպութիւնները կատարելու համար: Կեզր. Ժողովը որոշեց ուրեմն կազմել, կտակաց Հոփարածուրիւն անուան տակ, երեք լանձնաժողով մին Բարիզի, երկրորդը Գահիրէի և երրորդը Նիւ-Եօրգի մէջ, որոնց պիտի անդամակցին իրաւագէտներ, որպէս զի այս լանձնաժողովները կարենան օրինական թուղթերու պատրաստութիւնը կատարել համաձայն իւրաքանչիւր երկրի օրէնքներուն:

Այս Յանձնաժողովները, ինչպէս նաև մեր բոլոր Մասնաժողովները, պաշտօն պիտի ունենան հալթալթելու ամեն հայու, Միութեան անդամ ըլլայ ան թէ ոչ, պէտք եղած տեղեկութիւններն ու լուսաբանութիւնները կատարուելիք ձեւակերպութեանց մասին, որպէս զի նուիրատունները բաղձալի ամեն ապահովութիւն ու երաշխիք ունենան, և կտակ ըլլան որ ձեռնասօրէն ամէս խորհուրդ պիտի տրուի իրենց որպէս զի պատրաստուելիք թղթերը օրինական ըլլան:

Այս կերպով, շատ մը հայեր որ կը փափաքին նուիրատուութիւն մ'ընել, բայց չեն գիտեր որո՞ւ դիմել կտակ մը ընելու համար, կամ որո՞ւ կտակել դրամագլուխը զոր կը փափաքին լատկացնել բարեգործական կամ ազ-

գալին հաստատութեան մը, չի պիտի հարկադրուին, ինչպէս անցեալին մէջ, օտար ընկերութիւններու զիմելու և կամ իրենց մտադրութիւնէն ետ կենալու: Անոնք պիտի կրնան ասկէ վերջը, զայն ամենայն ապահովութեամբ յանձնել Միութեան, կտակ ըլլալով որ իրենց կամքը խղճատօրէն պիտի գործադրուի և լարգուի:

Անոնք պիտի կրնան նուիրատուութիւններ ընել զանազան ձեւերու տակ, որ կը տարբերին իւրաքանչիւր խնդրի համար և առաջադրուած նպատակին համեմատ: Իրենց ընտրութեան համաձայն անոնք պիտի կրնան կամ ուղղակի Միութեան յանձնել իրենց կտակին կամ նուիրատուութեան դրամը, կամ զայն դրամատան մը մէջ պահ դնել, trustee ձեւին տակ: Այս նպատակաւ Միութիւնը խորհրդակցած է առաջնակարգ դրամատուններու հետ որոնք պիտի ընդունին իրը աւանդ, ի հարկին մշտնջենապէս, կտակներ ունուիրատուութիւններ, զանոնք պիտի վարեն իրը trustee և անոնց եկամուտները ամեն տարի պիտի վճարեն Միութեան, որպէս զի ան կարենայ զանոնք գործածել կտակին կամ նուիրատուութեան տրամադրութեանց համաձայն:

Իրը օրինակ ստորև կը լիշտակենք մի քանի կարեւոր պարագաներ որոնք կրնան ներկայանալ:

1. Նուիրատուն Միութեան կը յանձնէ դրամագլուխը, անոր թողլով զայն վարելու և

եկամուտները՝ իր աֆրին մէջ որոշած նպատակին յատկացնելու հոգը:

2. Նուիրատուն Միութեան կը յանձնէ դրամագլուխը, բայց իրեն կը վերապահէ եկամուտները, սինչեւ իր մահը, կամ իրմէ վերջը նշանակելիք անձի մը, իբր ցկեանս թողակ:

3. Նուիրատուն, եթէ կը նախընտրէ, կրնալ իր որոշած դրամատան մէջ աւանդ դնել դրամագլուխը, անձեռնմխելի տրտի կամ ուրիշ ձեւի տակ, պայմանաւոր դրամատունը յանձնառու ըլլալ պահել սոյն աւանդը և տարուէ տարի Միութեան վճարել անոր եկամուտները:

Այս պարագալին, ինչպէս նախորդներուն մէջ, նուիրատուն բնականաբար կրնալ եկամուտները վերապահել իրեն կամ իր նշանակելիք անձին, սինչեւ մահ:

Այս վերջին կարգադրութիւնը մշտնջենապէս ամեն երաշխիք ներկայացնելու առաւելութիւնը ունի, նոյն իսկ եթէ որ մը Միութիւնը լուծուի, ըստ հիմնական կանոնագրին 25րդ յօդուածին:

Իբր տեղեկութիւն կը կցենք ներկալիս արդ տեսակ աքթի մը օրինակո, որ վերջերս ստորագրուեցաւ հայրենակիցի մը և Միութեանս միջեւ, և որ կը կազմէ մշտնջենական աւանդ մը զուիցերիական դրամատան մը մէջ:

4. Նուիրատուութիւնը կամ կտակը կրնայ նաև ըլլալ fidéicommisի ձեռով, նոյն իսկ վարդի ձեւով արն երկիրներուն մէջ որուն օրէնք-

ները կ'ընդունին ալս իրաւական ձեւերը:

5. Նուիրատուն կրնալ նաեւ կեանքի վրալ ապահովութիւններ կնքել, վճարելով ցման տարեկան բրիւները, իետ մահու Միութեան կը վճարուի ապահովադրուած դրամագլուխը և Միութիւնը կը գործածէ զայն կտակին կամ նուիրատուութեան պայմաններուն համաձայն: Այս ապահովագրուած դրամագլուխը կամ անոր եկամուտները կրնան նուիրուիլ վերուիշեալ ձեւերէն միոյն համաձայն, արսինքն դրամատան մը մէջ աւանդ, ցկեանս թողակ ի նըպաստ ալս ի նչ անձի, եւալլն:

6. Վերջապէս պէտք է գիտնալ որ Միութիւնը կ'ընդունի նաեւ վարել ամէն կտակները որոնք եղած են հայկական ընկերութիւններու կամ հաստատութիւններու, կամ անհատներու անուան, եթէ ալս վերջինք կը փափաքին յանձնել զանոնք Միութեան որ յանձնառու կ'ըլլալ ամեն տարի իր փարչութեան հաշիւը ներկայացնել անոնց:

Իբր տեղեկութիւն տրուած այս մի քանի օրինակները բաւական են ցոյց տալու ձեւերու այն մեծ պէսպիսութիւնը որոնց մէջէն նուիրատունները կրնան ընել իրենց ընտրութիւնը:

ՊՈՂՈՍ ՆՈՒՊԱՐ

իր մահէն վերջ իր հարստութիւնը չ. Բ.
Ը. Միութեան պիտի պատկանի, որով դրամա-
տունը պարտաւոր պիտի ըլլալ գործել համա-
ձայն այն հրահանգներուն զոր իրեն պիտի
տայ Միութիւնը:

Այն դրամատունը ուր կը գտնուի Պր. Ա-
րամեանի հարստութիւնը՝ պարտաւոր պիտի
ըլլալ բառ առ բառ գործադրել չ. Բ. Ը. Միու-
թեան կեղբ. Ժողովին իրեն տուած հրա-
հանգները: Արդ հրահանգները պիտի կրեն ստո-
րագրութիւնները Նախագահին, Դեր-Ատենա
պետներէն միոյն, Ատենադպիրին և Գանձա-
պետին:

Պր. Արամեան արդնամակը դրամատան գրած
օրն իսկ պիտի գրէ նաև չ. Բ. Ը. Միութեան
նախագահին, անոր ղրկելով դրամատան ուղ-
ղած նամակին մէկ պատճէնը և խնդրելով Մի-
ութենէն որ իր մահէն վերջ իր հարստութեան
եկամուտները գործածէ այս ինչ հաստատու-
թեան կամնպատակին զորս պիտի նշանակէ (*):

Պր. Արամեան իրաւունք պիտի ունենայ
պահանջելու Միութենէն որ իր տուած դրա-
մագլուխը անձեռնմխելի մնար: Պիտի կրնայ
պարման դնել նաեւ, որ Միութիւնը ազատ ըլ-
լալ ծախելու արժեթղթերը և գնելու ուրիշներ
որոնք իրեն աւելի ապահով կամ հասութաբեր

(*) Գրքոյթին մէջ կը գտնաք ցուցակը այն կարեւոր
հաստատութիւններուն որք կրնան իիմնուիլ չայս-
տանի մէջ

ՕՐԻՆԱԿ Ա.

Հայ ամուրի մը համար

Արամեան անուն հաւ մը, ամուրի, կրցած
է իր աշխատութեան շնորհիւ, առաւել կամ
նուազ հարստութիւն մը դիզել, հայրենիքի
սէրն ալ միշտ վառ պահած է իր սիրտին մէջ:

Յառաջացեալ տարիքի մը հասած՝ կը փա-
փաքի մահուանէ առաջ բարիք մը ընել իր
դժբաղդ հալրենակիցներուն: Անորոշ է, չի գի-
տեր ի՞նչ ընէ, կամ ի՞նչպէս ընէ:

Համարենք թէ մօտաւոր կամ հեռաւոր աղ-
գական չունի: Իր հարստութիւնը կը բաղկա-
նաւ մասամբ հնչուն դրամէ և մասամբ արժե-
թուղթներէ, զորս ի պահ դրած է դրամատան
մը մէջ, և որոնց վրայ ձեռք պիտի դնէ կամ
դրամատունը կամ նույը իր մահէն վերջ ի մեծ
վնաս իր Ազգին: Եթէ իր հարստութիւնը կը
բաղկանաւ նաեւ ապրանքներէ, կալուածներէ,
հողերէ, իր մահուանէ վերջ իրեն նդտնուած
երկրին կառավարութիւնը ըստօրինի պիտի
գրաւէ զանոնք:

Ահա թէ ի՞նչ խորհուրդ կուտանք ընել
արդ հալրենասէր հալուն:

Ան կրնաւ գրել դրամատան, ուր կը գտնուի
իր հարստութիւնը, զայն փոխանցել չ. Բ. Ը.
Միութեան, պարման դնելով որ ցորչափ ինք
ողջ է, իր արժեթղթերուն տոկոսները ինքը
միաւն իրաւունք պիտի ունենաւ զանձելու:

թուին, առանց սակայն նուազեցնելու դրամագլուխը: Պր. Արամեան իրաւունք պիտի ունենալ նաև պահանջելու Միութենէն որ այն հաստատութիւնը որուն կը սահմանէ իր հարըստութեան եկամուտները, իր անունը կրէ:

Այն պարագային երր, Պր. Արամեան ունի մէկ կամ աւելի հեռաւոր ազգականներ, որոնց կը փափաքի լատկացնել, մինչև իրանց մահը, մաս մը իր նուիրատութեան տարեկան եկամուտներէն, կամ մի անգամ ընդ միշտ գումար մը իր նուիրատութենէն, կրնայ նշանակել զայն Միութեան գրելիք իր նամակին մէջ, յայտնելով անունը, մականունը, հասցէն իր ազգականին: Միութիւնը՝ արդ նամակը ստանալուն, զայն իր փարչական ժողովին նկատաման կը լանձնէ և իրեն կը պատասխանէ պաշտօնապէս:

Գալով անշարժ կալուածներուն, ինչպէս խանութ, տուն, հող, այգի, են, են. Պր. Արամեան որպէսզի կարենալ զանոնք օրինաւորապէս Միութեան փոխանցել նուիրել կամ կտակել՝ և յետ մահու կնճիռներ չ'ծագին՝ պարտի դիմել Միութեանս, որ իրը զուիցերիական իրաւական գոլութիւն ունեցող ընկերութիւն, ցոյց կուտալ իրեն այն ամեն միջոցները որոնց պէտք է որ դիմէ ինք համաձայն իր գտնուած երկրին լատուկ օրինաց: Միութիւնը կրնալ նաև մատակարարել իր կալուածները և մինչև իր մահը գանձել անոնց վարձքերը:

Գալով իր ունեցած ապրանքներուն և կա-

րասիներուն, պաշտօնական աֆրով մը կրնալ իր գտնուած քաղաքին չ. թ. Ը. Միութեան: Մասնաժողովին, և եթէ գոյութիւն չունի, ամենէն մերձաւոր քաղաքին մէջ գտնուող մասնաժողովին պաշտօն լանձնել վաճառելու իր պայրանքները և կարասիները, վճարելու— եթէ հարկ կալ— կառավարական տուրքը, պայմանով որ արդ վաճառումէն գոլացած զուտ հասոլիթը զրկուի ուղղակի չ. թ. Ը. Միութեան կեղր. Ժողովի Նախագահին:

Պր. Արամեան կրնալ նաեւ, իր կենդանութեան, արդ արժեթուղթերը զրկել ուղղակի չ. թ. Ը. Միութեան կեղր. Ժողովի Նախագահին, պարման դնելով որ ամեն տարի, կամ ամեն վեցամիս, այդ արժեթուղթերուն տոկոսները իրեն զրկուին:

Եթէ Պր. Արամեան պէտք չունի իր արժեթուղթերու տոկոսներուն և կը փափաքի որ իր կենդանութեան ան լատկացուի հալրենիքի այս ինչ հաստատութեան կամ Ազգին ալս ինչ պէտքին, կրնալ նոյն իմաստով զրել Միութեան որ կը գործադրէ իր կամքը ամենայն խղճմտութեամբ:

ՕՐԻՆԱԿ. Բ.

Անգաւակ ամուսիներու համար

Պր. Նշան ամուսնացած է. երկար տարիներէ ի վեր կապրի իր կնոջը նետ, երկուքն ալ տարիքոտ են, ոչ ժառանգորդ ունին և ոչ ալ մերձաւոր ազգականներ, և կամ եթէ ունին,

չեն ուզեր իրենց հարստութիւնը անոնց թողուլ, որովհետև կամ իրենց ազգականները կարուտ չեն, և կամ ուրիշ պատճառներ ունին արդպէս ընելու:

Պր. Նշան կուզէ իր հարստութիւնը Միութեան նուիրել, բայց որովհետև անոր եկամուտովը կապրի, կը փափաքի որ իր յահէն վերջը արդ եկամուտը ծառալէ ցմահ իր կնոջ, և կամ եթէ իր կինը իրմէ առաջ վախճանի, իրեն ծառալէ ցմահ: Մին և միւսին մահէն վերջն է որ իր կտակած հարստութեան եկամուտը պիտի յատկացուի իր նշանակած հաստատութեան:

Պր. Նշան կը հարցնէ թէ, արդեօք Միութիւնը կընդունի աւս պարմանը: — Ալո՞:

Կը յանձնարարենք որ ան անձերը որոնք Պր. Նշանի պարագալին մէջ կը գտնուին, իրենց կենդանութեան, Միութեան յանձնեն արժեթուղթներէ բաղկացած իրենց հարստութիւնը: Միութիւնը պիտի փութայ զործադրել իրենց կամքը:

Անոնք իրաւունք պիտի ունենան գրելու Միութեան որ ծախէ աւս ինչ արժեթուղթերը անոնց տեղ ուրիշներ գնէ իրենք որոշելով գնուելիք թղթերը: Եւ ապահով կրնան ըլլալ որ իրենց կամքը պիտի յարգուի:

Գալով անշարժ կալուածներու, խանութ, տուն, հող, ևն, անոնց համար կրնան հետեւիլ այն եղանակին՝ որ ցուց տրուած է Ա. օրինակին մէջ:

Կառավարական ծանր տուրքերէն գերծ մալու համար, տուրքեր որոնք հարստութեան մը մինչեւ 740/օր կրնան սպառել, կը յանձնարարենք ջերմապէս որ կտակողները իրենց կենդանութեան միջոցին ընեն իրենց նուիրատուութիւնը Միութեան:

Միութեան յանձնուած արժեթուղթերը եզիպտոս կը զրկուին Միութեան դրամատան մէջ իպահ դրուելու համար ուր, երկրի օրէնքին համաձալն, եկամուտները ամեն տուրքերէ զերծ են:

Կրնանք իիշել օրինակը անզաւակ ամուսիններու որք տասը տարի առաջ Միութեան յանձնած են կարեւոր գումար մը հետեւեալ պալմաններով.

1. Յանձնուած գումարով առաջնակարգ եզիպտական պետական արժեթուղթեր գնել.

2. Ալդ արժեթուղթերուն տարեկան եկամուտը իրենց վճարել.

3. Ամուսնուն մահուան պարագալին, արդ եկամուտը ամբողջովին կնոջը յանձնել, մինչև անոր մահը.

4. Կնոջը մահէն վերջը, արդ եկամուտով գնել դպրոցական դասագրքեր, գիւղի դպրոցներու աղքատ աշակերտներու համար.

5. Եթէ ամուսնուն մահէն վերջը կինը վերամուսնանալ, ոչինչ տալ անոր և գործածել բոլոր եկամուտը այնպէս ինչպէս նշանակուած է Կրդ պայմանին մէջ:

Տարակուս չիկայ որ Միութիւնը երկար

— 14 —

տարիներէ ի վեր խղճմտօրէն յարգած է կամքը արդ վեհանձն նուիրատուին, որ իր պատանեկութեան շատ աղքատ ըլլալով նեղուած էր դպրոցական դասազիրքի պակասէն երբ կը յաճախէր իր գիւղին դպրոցը:

Այն պարագալին երբ անզաւակ ամուսիններ ուզեն իրենց մահէն վերջը իրենց հարստութեան մէկ մասը նուիրել Միութեան և միւսը՝ աւելի կամ պակաս մօտաւոր ազգականներու, կրնան հետեւիլ այն եղանակին որ ցուց տրուած է մեր առաջին օրինակին մէջ, արսինքն յայտնել Միութեան՝ անունը, մականունը, հասցէն իրենց ազգականին և նշանակել գումարը զոր կ'ուզեն անոր յատկացնել:

ՕՐԻՆԱԿ Գ.

Զաւակներ ունեցող ամոլներ

Այն պարագալին որ զաւակներ ունեցող հարուստ ընտանիքներ կը փափաքին որոշ գումար մը նուիրել հաստատութեան մը, օրինակի համար, հիշանդանոցի մը, եկեղեցիի մը և կամ դպրոցի մը կառուցման համար, և ուրիշ գումար մ'ալ որպէս զի անոր տոկոսները ծառալեն արդ հաստատութեան մատակարարութեան, կրնան իրենց նուիրատուութիւնը վստահիլ Միութեան, որ սիրալօժար կստանձնէ իր հսկողութեան տակ կառուցանել մտադրուած շէնքը, և անոր կը յատկացնէ որոշուած եկամուտները և կը հսկէ ու կը վարէ

այն հաստատութիւնը: Տարակուս չկալ որ բոլոր այս հաստատութիւնները նուիրատուին անունը պիտի կրեն:

Այս կարգին պատկանող նուիրատուները պէտք է կրեն Միութեան, յաւոնելով իրենց կամքը ամեն հարկաւոր մանրամասնութիւններով: Միութիւնը ուշի ուշով կը քննէ խնդիրը և նուիրատուներուն ցուց կուտայ լաւագուն միջոցները, իրագործելու համար իրենց փափաքը:

ՕՐԻՆԱԿ Գ.

1.— Սպահովագրուրիւն

Բարի հալլենասէը հայ մը կը փափաքի չալաստանի մէջ օգտակար գործ մը ընել, բաւց իր կարողութիւնը չի ներեր, քանզի արդ գործին ծախքերը իր միջոցներէն վեր են: Այն հալը կրնայ ամուրի, ամուսնացեալ կամ ընտանիքի տէր ըլլալ:

Այս պարագային կը յանձնարարենք իրեն Ապահովագրական ընկերութեան մը մօտ, զոր Միութիւնը ի հարկին կրնալ իրեն ցուց տալ. Միութեան ի նպաստ կեանքի ապահովագրութիւն մը կնքել, իրեն յարմար դատած գումարով: Իր ապահովագրութեան պայմանագրին մէջ աւելցնել կուտայ որ իր մահուան պարագալին ապահովագրուած գումարը ամբողջութեամբ չ. թ. Ը. Միութեան յանձնուի:

Միութիւնը արդէն օրինակը ունի բարի հայու մը, որ իր կեանքը ապահովագրած էր

ինպաստ Միութեան. բայց մահէն լետոյ քաղաքական դէպքերու բերմամբ նուիրատուին կինը և զաւակները իրենց բոլոր հարստութիւնը կորսնցուցած ըլլալուն, Միութիւնը՝ նուիրատուին ալրի կնոջ խնդրանքին վրա ապահովագրուած գումարը նունութեամբ անոր վերադարձուց:

ՕՐԻՆԱԿ Ե.

2. - Ապահովագրութիւն

Գործաւոր մը, փոքր արհեստաւոր մը, համեստ հալրենասէր մը, կուզէ բարի գործ մ'ընել իր հալրենիքին համար, բայց հարուստ չէ, ունէ խնալողութիւն չունի զոր կարենալ յանձնել Միութեան:

Ան կրնալ իր կեանքը ապահովագրել ընկերութեան մը մօտ զոր Միութիւնը կրնալ իրենց ցոյց աալ, տարուէ տարի վճարելով բրիւմ մը, որ կը տարբերի ապահովագրուած գումարին կամ ապահովագրուողին տարիքին համեմատ:

Ապահովագրուողը կրնալ իր կեանքը ապահովագրել 500, 1000, 10,000 կամ աւելի մեծ գումարի մը համար, ըստ այն բրիւմին զոր ան կրնալ տարուէ տարի վճարել իր խնալութիւններով:

Այս պարագալին պէտք է որ այդ հալրենակիցը տեղեկացնէ Միութեան, գումարը ուրուն համար ինքոյնքը ապահովագրած է ինպաստ Միութեան, և բրիւմը զոր տարուէ

տարի պիտի վճարէ, նշանակելով նպատակը որոն Միութիւնը պարտի լատկացնել ապահովագրուած գումարը, կամ անոր եկամուտը, իր մահէն լետոլ:

Միութիւնը ունի, իրեն ինպաստ եղած այս տեսակ ապահովագրութիւններէն տամնեակ մը, որոնք կնքուած են համեստ անձերու, նոյն իսկ եկեղեցականներու կողմէ, որոնց մահէն լետոլ Ապահովագրական ընկերութիւնը իսկոյն վճարած է Միութեան ապահովագրուած ալդ գումարները, որոնք լատկացուած են իրենց որոշեալ նպատակներուն:


ՕՐԻՆԱԿ Զ.

Ցկեանս բռակ

Տարիքուած ալր կին մը, որ ունի պզտիկ հարստութիւն մը, կազմուած ամբողջութեամբ արժեթուղթերէ կամ կալուածներէ, և կամ մաս մը արժեթուղթերէ և մաս կը հասութարեր կալուածներէ: Մին կայ միւսը կ'ապրին իրենց ստացուածքներուն եկամուտներովը, որոնք սական չ'են բաւեր վաւելչօրէն ապրելու համար, անոնք կը փափաքին ունենալ քիչ մաւելի դրամ՝ իրենց ծերութեան օրերուն մէջ: Ի՞նչ կրնան ընել:

Կրնան իրենց բոլոր հարստութիւնը Միութեան յանձնել՝ պալմանաւ որ մինչեւ իրենց մահը Միութիւնը իրենց վճարէ թոշակ մը:

Օրինակ մը տանք աւելի լաւ բացատրելու



համար. 63 տարեկան մարդ մը ամսական 20
անգլ. ոսկիի եկամուտ մ'ունի, որով կապլի
նեղութեամբ, երջանիկ պիտի ըլլաւ եթէ 50
ոսկի ունենալ, կը խորհի թէ Միութիւնը
կրնա՞ւ, արդեօք այս տեսակ կարգադրութիւն
մը ընդունիլ:

Ալո՛, Միութիւնը կընդունի այս տեսակ
կարգադրութիւն մը և լրնայ այդ լաւելուա-
ծական գումարը վճարել շատ մը պարագա-
ներու մէջ:

Եթէ այն անձը որ Միութենէն ցկեանս
թոշակ մը ստանալու համար անոր կը լանձնէ
իր հարստութիւնը, և կը փափաքի նաև որ իր
մահուան պարագալին Միութիւնը կատարէ
իր թաղումը և նորն իսկ իրեն համար գերեզ-
ման մը շինէ. Միութիւնը կ'ընդունի բոլոր
այս պայմանները:

Միեւնորն բանը կարելի է նաեւ ընել ա-
մուրիներու և անգաւակ ամոխերու եթէ կը
փափաքին այս տեսակ կարգադրութիւն մը:

Ա Տ Ս Ա Կ

Միութիւնը կ'ընդունի ամեն տեսակ կտակ
որոնց պայմանները դատերու տեղի չեն տար:

Ցուցակ օգտակար հաստատութիւններու
զոր կարելի է հիմնել չաւաստանի մէջ և կամ

ուրիշ երկրի մը մէջ՝ ուր բաւականաչափ հա-
դաղթականներ կը գտնուին:

1. Հիւանդանոցներ կամ դարձանատուններ
այն քաղաքներուն մէջ ուր անոնք գո-
րութիւն չունին:
2. Վեներական ախտերու դարձանատուն-
ներ:
3. Աչքի հիւանդութեան դարմանատուն-
ներ և կուրանոցներ:
4. Ծննդաբերական մալրանոցներ:
5. Հիւանդ տղաքներու դարմանատուններ:
6. Ծերանոց և անկելանոց:
7. Փոխանցիկ հիւանդութեանց և թոքախ-
տի սանաթօրիօմներ:
8. Իւրաքանչիւր գիւղախումբի համար
բժիշկ մը, փոխադրելի գեղարանով մը,
որպէս զի գիւղ գիւղ այցելէ, հիւանդ-
ները դարմանէկ գիւղացիներուն հար-
կաւոր առողջապահական խորհուրդներ
տալ:
9. Ճահիճներու չորացում:
10. Ըմպելի ջուրի փոխադրում:

11. 20 անգլ. ոսկիի մրցանակ մը հաստա-
տել այն գործաւորին կամ արհեստաւո-
րին որ որբուծիի մը հետ կ'ամուսնանայ:
12. Գործաւորական տուններ կառուցանել և
զանոնք տալ նոր ամուսնացած գոր-
ծաւորներու:

15. Մրցանակներ հիմնել արն գիւղացիներուն որ ողջ վեց զաւակ ունին:
14. Գիւղեր կամ թաղեր հիմնել գաղթական կամ գործաւոր ընտանիքներու համար:
15. Նպաստներ հաստատել ձմեռուան եղանակին կարօտ ընտանիքներու ուտելիք և զգեստեղէն բաշխելու համար:
16. Դպրոցական աղքատ ուսանողներու տաք ապուր բաշխել:
17. Բաղնիքներ, կամուրջներ և աղբիւրներ կառուցանել:
18. Մեղուարուծութիւնը քաջալերել:

Դաստիարակութիւն

1. Դպրոցներ կառուցանել արն գիւղերուն մէջ ուր չկան:
2. Վարժապետներ ղրկել արն գիւղերուն մէջ ուր գիւղացին աղքատութիւնը թոլլ չի տար վարժապետին վարձքը ապահովել:
3. Գիւղի դպրոցներուն քով պարտէզներ շինել որպէս զի դասատուն կարենալ աշակերտներուն սորվեցնել ծաղիկի: բանջարեղէնի և պաղատու ծառերու մշակութեան նախագիտելիքները:
4. Գիւղի դպրոցներուն ձրիաբար հայթաւթել գրքեր և գրենական պիտուքներ:
5. Ուշիմ աղքատ աշակերտներու համար քսակներ հաստատել որպէս զի կարենան յաճախել բարձրագոյն վրժաար, աններ

6. Գիւղերուն մէջ հաստատել ընթերցաւանեներ ուր շաբաթը անգամ մը վարժապետը գիւղին չափահաս ընակիչներուն ժողովրդական թշշկական և երկրագործական թերթերուն մէջ պարունակուած օղուածներուն ամփոփութը ընլ:
7. Ընթերցասրանները օժտել ցուցատախտակներով որոնք ցոյց տան ալքօլային ըմպելիներու պատճառած կասները, արգիլելու համար ալքօլամոլութեան հակումը:
8. Ընթերցասրաններուն մէջ հաստատել փոքր գրադարաններ որոնք պարունակեն երկրագործութեան, պատճառութեան, քաղաքացիական բարոյականի վերաբերեալ գրքուկներ:
9. Արհեստի և արուեստի վարժարաններ հիմնել:
10. Քաղաքներու մէջ ընդհանրական գրադարաններ շինել:
11. Քաղաքի վարժարանները օժտել մարմնամարզական սրահով մը՝ նորածեւ գործիքներով:
12. Մրցանակ հաստատել՝ քաղաքական և զինուորական, գրական և վաճառակական տեսակէտսպ' չալաստանի մերձաւոր երկիրներու և բնակիչներու վերաբերեալ, և անոնց փոխաղարձ յա-

րաբերութեանց մասին յօրինուած աշ-
խատասիրութեանց:

15. Մըցանակ հաստատել այն աշխատասի-
րութեանց համար որ կը պատկանին
տեղական ասացուածքներու և լոկ հա-
յերէն բառագիտութեան՝ բոլոսերու. մի-
ջատներու, անշունչ մարմիններու՝ ո-
րոնք կը պակսին բառարաններու մէջ:
14. Երեւանի համալսարանը օժտել տարե-
կան գումարով մը, լապօրաթուարի
գործիքներու և ուսման պիտանի զա-
նազան հաւաքածոյներու գնման համար:
15. Համալսարանի շրջանաւարտ արժա-
նաւոր աշակերտներուն քսակներ շնոր-
հել, որպէս զի երկու տուրուան ժամա-
նակամիջոցի մը մէջ կատարելագործեն
իրենց ուսմունքը օտար երկիրներու մէջ:
16. Նպաստներ յատկացնել 60 տարեկանէն
աւելի ծեր մտաւորականներու, փար-
ժապետներու, զասատուններու, զրա-
գէտներու, արթիսթներու, որոնք չեն
կրնար աշխատիլ և նեղութեան մէջ կը
դանուին:

Երկրագործութիւն

Օգնելու համար գիւղացիին, որպէս զի բա-
րելաւէ իր բերքը և աւելցնէ իր բարեկեցու-
թիւնը, կարելի է.

1. Կով մը, գոմէշ մը, ալծ կամ ոչխար մը
տալ աղքատ գիւղացիին.

2. Մէկ կամ աւելի գիւղերու տալ, լաւ
տեսակէն, ցուլ մը, արու գոմէշ մը,
խոլ մը, նոխազ մը գիւղացիին արջա-
ռին տեսակը բարելաւելու համար.
3. Հաւեր, սագեր, հնդկահաւեր տալ գիւ-
ղացիսերուն.
4. Մեղուի կատարելագործեալ փեթակներ
տալ.
5. Առաջին տեսակէն ցորենի, գարիի, հա-
ճարի, եղիպտացորենի, կորեկի, բամ-
պակի ևնի. սերմնցուներ տալ.
6. Իւրաքանչիւր գիւղի հացահատիկի լաւ
զտիչներ տալ, որպէս զի գիւղացիները
կարենան մաքրել իրենց սերմնցուները.
7. Գիւղացիներուն լարմարագոյն երկրա-
գործական գործիքներ տալ, ինչպէս ա-
րոր, գութան, լող, քերթիչ (herse) ման-
գաղ, ևն.
8. Իւրաքանչիւր գիւղը բաժանորդագրել
երկրագործական և ժողովրդական-բժըշ-
կական թերթի մը.
9. 10 Անգլ. ոսկիի մրցանակ մը տալ այն
գիւղացիին որուն զաշտը լաւագոյն կեր-
պով պատրաստուած է և որուն հունձ-
քը ամենազեղեցիկը և ամենամաքուրն է.
10. 10 Անգլ. ոսկիի մրցանակ մը տալ այն
գիւղացիին որուն արջառը ամենազեղե-
ցիկն է և ամենալաւ կերպով ինւ-մուած.
11. Իւրաքանչիւր գիւղի տալ կատարելա-
գործեալ մէկ կամ աւելի բարաւեր կա-

- բագի շինութիւնը քաջալերելու համար»
 12. Յ Անգլ. ոսկիի մրցանակ մը տալ այն
գիւղացիներուն որոնք առ նուազն տե-
սիաթին մը հող պիտի աղբեն, քաջա-
լերելու համար քիմիական աղբին գոր-
ծածութիւնը որ ցարդ գրեթէ անծա-
նօթ է երկրին մէջ։
 13. Պտղատու և անտառի ծառերու տնկա-
րաններ ստեղծել.
 14. Նպաստել հայ կառավարութեան որպէս
զի փութացնէ ոռոգման գործերը՝ խո-
պան հողերը մշակելի դարձնելու համար.
 15. Նպաստել խոնաւ հողերուն չորացմանը.
 16. Գիւղացի հողագործներու համար տնակ-
ներ կառուցանել.
-

Կոսակի օրինակ մը

- Ի ներկալութեան նօտար ի
 Մէկ կողմէն՝ չալկական թարեգործական Հնդկ.՝
 Միութիւնը.
 Միւսկողմէն՝ Պ. Խ. որ կը գործէ անձնապէս.
 Կնքեցին հետեւեալ պաւանագրութիւնը.
 Յօդ. 1 — Պ. Խ. կը նուիրէ չալկ. թարեգ. Հնդկ.
 Միութեան հետեւեալ արժեթուղթերը.
-
-
-

Այս նուիրատուութիւնը կը կնքուի հե-
տեւեալ պարտադրութիւններով և պայմա-
սերով, որոնք օրէնք կը նկատուին երկու կող-
մերուն համար:

Յօդ. 2 — Նուիրատուութեան առարկայ կազմող
վերոյիշեալ լոլոր արժեթուղթերը, ի պահ
պիտի դրուին Տ Դրամատան մօտ, որ
յանձնառու եղած է զանոնք պահել իբր
մշտնշնական աւանդ, «Հալկ. Հնդկ. Թարեգ.՝
Միութեան Հիմնադրամ Տ» անուամը պա-
րութայի մը մէջ, և անոնց հասութները
վճարել չալկ. թարեգ. Հնդկ. Միութեան,
որպէսզի գործածուին ըստ նուիրատուի՝
սոյն վաւերաթուղթի մէջ սահմանած պար-
մաններուն: Եթէ պատահի որ Տ Դրամա-
տունը լուծուի, ան վերոյիշեալ աւանդը
պիտի փոխանցէ միեւնորն պայմաններով
իրեն լաջորդող դրամատան կամ ուրիշ
ու է հաստատութեան, դոր պիտի նշա-
նակէ ինք՝ համաձայնութեամբ չալկ.
թարեգ. Հնդկ. Միութեան և նուիրատուին,
որչափ ատեն որ ողջ է նա:

Յօդ. 3 — Այս պարագալին, երբ աննախատե-
սելի ծանր պատճառներու հետեւանօք
անհրաժեշտ լինի նուիրութ արժեթղթե-
րը փոխանցել ուրիշ դրամատան մը, այս
փոխանցումը կրնայ տեղի ունենալ մի-
այն համաձայնութեամբ չալկ. թարեգ. Հնդկ.
Միութեան և նուիրատուին, որ-

չափ ժամանակ որ նա ողջ է: Նորա մահուանէն վերջ, Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան կեղրոնսական ժողովու մէկ որոշումը բաւական է ալդ փոխանցումը կատարելու, պարանաւ որ նոր դրամատունը ստանձնէ Կ Դրամատան նախկին բոլոր պարտականութիւնները:

Յօդ. 4 — Նուիրատուի ողջութեան, վերոլիշեալ արժեթուղթերու փաճառումը և անոնց տեղ ուրիշներ գնելու գործողութիւնը կը կատարուի միայն համաձայնութեամբ նուիրատուի և Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան: Նուիրատուի մահէն վերջ Հ. Բ. Ը. կը ամառ ծախել ալդ արժեթուղթերը համաձայնութեամբ աւանդապահ դրամատան, բայց փոխարժէքով պարտական է անմիջապէս առաջնակարգ արժեթուղթեր զնել:

Յօդ. 5 — Կ Դրամատունը պիտի վճարէ հասոլթները Հ. Բ. Ը. և նա իր կարգին ալդ գումարէն 5% զեղչելով իր վարչական ծախքերուն համար, պիտի վճարէ միացորդը $\left\{ \begin{array}{l} \text{Պ. } X\text{ին, անոր կեանքին ամբողջ տեսուցորդը} \\ \text{Տիկ. } X\text{ին, նուիրատուի ամուսնոյն,} \\ \text{և եթէ } \text{Պ. } X. \text{ վերապրի իր ամուսնոյն} \\ \text{հանգուցեալ } S\text{իկնոջ լատկացուած գումարը կը փոխանցուի իրեն, } M\text{ինչեւ իր մահը:} \end{array} \right.$

Այս եկամուտները պէտք է լատկացուին միմիայն Պ. Խի և Տիկին Խի ծախքերուն և պիտի վճարուին անձամբ Տիկին Խին և անոր մահէն իետու անձամբ Պ. Խին. կամ անձամբ Պ. Խին և անոր մահէն իետու Տիկ. Խին, առանց որ երբ և իցէ երրորդ անձ մը ու եէ պահանջ կարողանալ լարուցանել տրամադրելի գումարներուն մէկ մասին կամ ամբողջութեանը նկատմամբ:

Յօդ. 6 — Հասութառուի կամ երկու հասութառուներու մահէն վերջ, ալդ հասոլթսերը պիտի գործածուին հետեւեալ ձեւով, առանց որ Պ. Խի և Պ. և Տիկին Խի ժառանգորդները իրաւուանք ունենան միջամտելու ու է կերպով.

ա. — 5°/o տարեկան հասոլթէն պիտի հաւաքուի դրամատան մօտ և աւելցուի նուիրատուութեան գումարին, իսկ մնացորդը պիտի լանձնուի Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան:

բ. — 15°/o տարեկան հասոլթէն պիտի գանձուի Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան կողմէ իր վարչական ծախուց համար:

գ. — Մնացորդը՝ ալսինքն 80°/o պիտի գործածուի Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան ձեռամբ հետեւեալ՝

—————
} նշանակել նուիրատուի
սահմանումները.

Յօդ. 7 — Ներկաւ վաւերաթուղթի տրամադրութիւնները կը կիրակրուին ոչ միայն նուիրեալ արժեթուղթերուն, այլև անոնց, ուրոնք կրնան փոխարինել նախկին արժեթուղթերը, ինչպէս նաև դրամատան գանձած 3% ով լետագալին գնուածները, ըստ վերոյիշեալ երդ յօդուածի ա. պարբերութեան:

Յօդ. 8 — Այն պարագալին երբ չայկ. Բարեգ. Ընդհ. Միութիւն յուծուի ըստ նորա կանոնագրին 25 յօդուածի տրամադրութեանց՝ ներկաւ նուիրատուութիւնը պիտի պատկանի այն ընկերակցութեան կամ հիմնարկութեան, որ փոխարինէ չայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան և կամ առ իշկոյէ
 (չայկ. ամենաբարձր կրօնական լշխանուանոր, թեան, նուիրատուն կրնայ նշանակել այս տեղ իր ընտրած ճէկ հաստատութիւնը.
 որ պիտի շարունակէ նուէրի յանձանձումը, ճշգրտորէն զործածելով ներկայ վաւերաթուղթի պալմաններն ու տրամադրութիւնները:

Յօդ. 9 — Այն պարագալին որ նուիրատուութեան հասութները կանոնաւոր կերպով չգործածուին (ըստ վերոյիշեալ երդ յօդ.) և կամ այն պարագալին որ արժեթուղթերը ծախուին կամ ուրիշ դրամատան մը

փոխանցուին առանց նուիրատուններուն կամ հասութառուններուն հաւանութիւնը ստանալու (տես յօդուած չորրորդ) անոնք իրաւունք պիտի ունենան ջնջելու ներկաւ նուիրատուութիւնը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0211210

43. 113

